

ԿԱՐՄԻՔ

Նարեկ Հրանտի Գրիգորյանի «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման արդյունավետությունը խորհրդարանական կառավարման համակարգում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Արդի քաղաքագիտական հետազոտություններում՝ հատկապես համեմատական քաղաքագիտության բնագավառում կարևոր տեղ են զբաղեցնում պետությունների կառավարման համակարգերի և դրանց տարաբնույթ մոդիֆիկացիաների ուսումնասիրությունները: Բանն այն է, որ քաղաքական համակարգի և պետության կառավարման արդյունավետությունը շատ դեպքերում ուղիղ համեմատական է ընտրված կառավարման մոդելի ընտրությունից, դրա սահմանադրական ամրագրումից և հասարակության քաղաքական մշակույթում այս կամ այն կառավարման համակարգի գործառնության լեգիտիմության ընդունումից: Այս առումով Բացառություն չի կազմում նաև Հայաստանի Հանրապետությունը, որի անկախության հռչակումից ի վեր պետական կառավարման արդյունավետ մոդելի ընտրության հիմնահարցը թեզ հասարակական-քաղաքական քննարկումների առարկա է դարձել: 2015թ՝ սահմանադրական փոփոխություններով կառավարման կիսանախագահականից անցում կատարվեց խորհրդարանական կառավարման մոդելին, ու այդ համատեքստում ՀՀ քաղաքական և քաղաքագիտական դիսկուրսում կրկին ակտիվացան խորհրդարանական կառավարման համակարգին նվիրված քննարկումներն ու ուսումնասիրությունները: Այս տեսանկյունից Նարեկ Գրիգորյանի ընտրած գիտական ուսումնասիրության թեման խիստ արդիական կարելի է համարել, քանի որ ՀՀ-ում խորհրդարանական կառավարման համակարգի և պառլամենտարիզմի մշակույթի ամրապնդման գործում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի պատշաճ գիտական ուսումնասիրությունն ու հայաստանյան քաղաքական իրականության համատեքստում տեղայնացումը կարող է շատ մեծ գիտա-գործնական նշանակություն ունենալ: Բացի այդ, հատկապես հետհեղափոխական ժամանակահատվածում ՀՀ-ում նկատվող սոցիալական և Ծառաթանան բնեռագումր, «սևերի» և «սպիտակների», «հեղափոխականների» և

«հակահեղափոխականների», «պետականների» և «հակապետականների» նոր «ստրատանների» բաժանման փորձերը լրացուցիչ արդիականություն են հաղորդում թեմային և էլ ավելի են կարևորում հեղինակի համարձակ գիտափորձը՝ տեղայնացնել բազմակազմ հասարակությունների բնականոն գործառնության համար նախատեսված «կոնսոցիատիվ ժողովրդավարության» մոդելը համասեռ հասարակությունների քաղաքական ինքնակազմակերպման համատեքստում, ինչպիսին ՀՀ-ն է:

Հեղինակը սույն ատենախոսության շրջանակներում անդրադառնում է հարցերի բավականին լայն շրջանակի: Մասնավորապես՝ գիտական հետազոտության առարկա են դառնում կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսա-մեթոդաբանական հիմքերը, համեմատական վերլուծության են ենթարկվում ժողովրդավարության տարբեր տեսությունները, կառավարման տարբեր համակարգերի գործառնության պարագայում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի գործարկման առանձնահատկությունները, պառլամենտարիզմի մշակույթի արմատավորման գործում կոնսոցիատիվիզմի դերակատարումը և այլն: Գիտա-տեսական և գործնական կիրառելիության տեսանկյունից հատկապես արժեքավոր ենք համարում ատենախոսության երրորդ գլուխը՝ որտեղ հեղինակը հետաքրքիր նորամուծություն է կիրառում, կոնսոցիատիվ ժողովրդավարության հայտնի տեսաբան ԱՌ Լեյփհարթի մոտեցումները տեղայնացնելով ՀՀ քաղաքական համակարգի վրա: Լիովին կիսում ենք հեղինակի այն պնդումը, որ «կոնսոցիատիվ ժողովրդավարության» մոդելը կարող է կիրառվել ոչ միայն բազմակազմ, այլ նաև համասեռ հասարակություններում՝ որպես սոցիալական շերտերի միջև կոնֆլիկտային խնդիրների կարգավորման արդյունավետ եղանակ, ինչպես նաև ավելի որակյալ համասոցիալական քաղաքականություն իրականացնելու գրավական:

Միաժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ բացթողումներից, որոնցից, մասնավորապես, կառանձնացնեինք հետևյալները՝


1. Աշխատանքի 115-րդ էջում հեղինակը նշում է, որ ՀՀ-ում ներկայումս նախարարությունների թիվը մոտավորապես կրկնակի ավել է, սակայն չի գերազանցում 20-ը (ստույգ 17 նախարարություններ): Այստեղ առկա է անճշտություն, քանի որ ՀՀ կառավարության կազմում այս պահին գործում են 12 նախարարություններ (տե՛ս <https://www.gov.am/am/structure/>):

2. Ատենախոսության մեջ առկա են նաև որոշ հուզական, ոչ գիտական ձևակերպումներ: Մասնավորապես, 113-րդ էջում հեղինակը նշում է, որ «Ներկա Մահմանադրությունը, ըստ էության նախկին, քաղաքացիների կողմից մերժված, 2018 թ. հեղափոխության արդյունքում տապալված իշխանության հարատևումն ապահովող փաստաթուղթ է»:
3. Կարծում ենք, որ լրացուցիչ պարզաբանման կարիք ունի նաև ատենախոսության գիտական նորույթների 6-րդ կետը, ըստ որի «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման շրջանակներում առաջարկվել է ՀՀ արտաքին քաղաքականության արդիականացման նոր օրակարգ, որը նախատեսում է կարճաժամկետ և երկարաժամկետ օրակարգերի իրականացման տարբերակներ»: Շարադրանքում չի մանրամասնվում այդ օրակարգը, ինչպես նաև թույլ է արտահայտված, մեր կարծիքով, ՀՀ արտաքին քաղաքականության արդիականացման կապը կոնսոցիատիվ ժողովրդավարության հետ:
4. Նմանապես, կարծում ենք, որ լրացուցիչ ավելի լուրջ գիտական ուսումնասիրության կարիք ունի նաև Արցախի հիմնահարցի կարգավորման համատեքստում դաշնային պետության ստեղծման թեզը, քանի որ այդ դեպքում արդեն գործնական կիրառելիության տեսանկյունից առավել արդիական է դառնում Լեյփհարթի առաջարկած «կոնսոցիատիվ ժողովրդավարության» դասական տեսությունը, որպես բազմակազմ հասարակություններում կոնֆլիկտների կարգավորման և համագոյակցության ապահովման մեխանիզմ:

Այնուհանդերձ, պետք է արձանագրել, որ վերոնշյալ դիտողությունները էականորեն չեն ազդում ատենախոսության ընդհանուր բովանդակության, գիտական արժեքի և որակի վրա: Աշխատանքը գրված է պատշաճ գիտական բարեխղճությամբ և համապատասխան գիտական ապարատի կիրառմամբ, եզրակացություններն ու առաջարկությունները փաստարկված են, օգտագործված է հարուստ աղբյուրագիտական բազա, ատենախոսությունում առկա են գիտական նորույթ պարունակող շատ դրույթներ, տպագրված հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական թեզերը: Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ Նարեկ Հրանտի Գրիգորյանի «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման արդյունավետությունը խորհրդարանական կառավարման համակարգում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ԻԳ.00.02 «Քաղաքական

ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը լիովին համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, ատենախոսը արժանի է հայցվող գիտական աստիճանին, ինչի համար էլ համապատասխան միջնորդությամբ դիմում եմ մասնագիտական խորհրդին:

Պաշտոնական ընդդիմախոս՝



ԽԱՉԻԿ ԳԱԼՍՅԱՆ

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության

և տեսության ամբիոն

քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խ. Գալստյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար՝

ՊՈԳ.Թ., դոցենտ

ք. Երևան

25.09.2020թ



Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ